ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

✓ **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

Օլգա Ղուկասյան՝ ՀՀ մշակույթի նախարարության ՊՄՀՊ գործակալության վերականգնման բաժնի առաջին կարգի մասնագետ:

✓ **ՔԱՂԱՔ /ԵՐԿԻՐ/ԺԱՄԿԵՏ**

Աբիջան (Կոտ դ'Իվուարի Հանրապետություն), 2017 թ. հուլիսի 27-31-ը:

✓ **ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն Ֆրանկոֆոնիայի 8-րդ միջազգային մարզամշակութային խաղերին:

2017 թվականի հուլիսի 27-31-ը մեկնեցի Աբիջան (Կոտ դ'Իվուար)՝ որպես ծրագրի պատասխանատու մասնակցելու Ֆրանկոֆոնիայի 8-րդ միջազգային մարզամշակութային խաղերին:

Հայաստանի Հանրապետությունը մասնակցում է Ֆրանկոֆոնիայի շարժմանը 2004 թվականից՝ սկզբում որպես դիտորդ, 2008 թվականից՝ որպես ասոցացված անդամ, իսկ 2012 թ. հոկտեմբերից՝ որպես լիիրավ անդամ:

Ֆրանկոֆոնիայի խաղերն անց են կացվում չորս տարին մեկ անգամ:

Հայաստանը նշյալ խաղերին մասնակցեց «Պար», «Երգ», «Նկարչություն», «Քանդակագործություն», «Լուսանկարչություն», «Գրականություն», «Հեքիաթ» անվանակարգերում:

Մասնակիցների ընտրությունը կայացել է նախապատրաստական երկամյա աշխատանքների ընթացքում՝ փորձագետների կողմից:

Խաղերի շրջանակներում Կոտ դ'Իվուար են մեկնել «Պար» անվանակարգում՝ Արփինե Բալայանը և Գեղամ Հակոբյանը, «Երգ» անվանակարգում՝ Անի Սարգսյանը, «Քանդակագործություն» անվանակարգում՝ Հայկ Ղազարյանը, «Նկարչություն» անվանակարգում՝ Արարատ Մինասյանը, «Լուսանկարչություն» անվանակարգում՝ Անուշ Բաբաջանյանը, «Գրականություն» անվանակարգում՝ Աննա Բաղդասարյանը, «Հեքիաթ» անվանակարգում՝ Մերի Գալստյանը:

Խաղերի ընթացքում մասնակցել եմ պատվիրակությունների պատասխանատուների ամենօրյա ժողովներին, որոնց ընթացքում քննարկվել են կազմակերպչական հարցեր:

Համակարգել եմ մասնակիցների ելույթից առաջ պարտադիր փորձերի ժամերը, ինչպես նաև ընթացիկ այլ հարցեր:

Նշեմ, որ երգի և պարի անվանակարգերում առաջադրված մասնակիցները հուլիսի 27-ին հրավեր ստացան մասնակցելու Կոտ դ'Իվուարի Հանրապետության Աջամե քաղաքում ֆրանկոֆոնիայի խաղերի շրջանակներում կազմակերպված համերգին:

Հարկ է նշել նաև, որ պատվիրակության կազմում սպորտի բնագավառից ընդգրկված մարզիկները ևս բարձր պարգևների արժանացան /ոսկե, արծաթե և բրոնզե մեդալներ/:

✓ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հայաստանյան մասնակիցները Ֆրանկոֆոնիայի 8-րդ միջազգային խաղերի արդյունքում արժանացան հետևյալ մրցանակների.

- «Լուսանկարչություն» անվանակարգում՝ /մասնակից՝ Անուշ Բաբաջանյան/ արծաթե մեդալ,
- «Գրականություն» անվանակարգում՝ հատուկ մրցանակ, հրավեր Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության կողմից, Ֆրանսիայի Լիոն քաղաքում մասնակցի /Աննա Բաղդասարյան/ պատմվածքի հրատարակություն:

Հուշարձանների վերականգնման բաժնի
առաջին կարգի մասնագետ Օ. Ղուկասյան